բութիւններէն, որոնց մէջ ամենէն հռչակաւորն է մեծ հիւանդանոցին եկեղեցւոյն աւագ խորանին վրայի Աւետման պատկերը հրեշտակաց բազմութե՛ մը՝ որոնք Հօր Աստուծոյ չորս բոլորը կը պատեն։ Ասոր գործքերէն Հռոմ՝ ալ շատ կը գտնուին, և բաց 'ի իւր մանր նկարչներէն՝ որոնք այլ և այլ եկեղեցիներ ցրուած կան, շատ երևելի է Օրը ներկայացընող պատկերը, որ գերահռչակ կուիտոյ Ռէնի իտալացի պատկերահանին քաշած Արշալուսոյն հետ կրնայ բաղդատուիլ։ Դարձեալ կը գտնուին Բարիզու արքունական Լուվր թանգարանին մէջ կուէրչինոյի այլ և այլ գործքերը՝ որոնց մէջ համբաւաւորը և գովութեան արժանին է Ս. Հերոնիմոսին պատկերը, որ քունի մէջ ըլլալով փողերու գուալէն կ'արթըննայ։ Նմանապէս հեղինակիս նշանաւոր գործերէն մէկն ալ է Ս. Զէչիլիայի պատկերը, որ այժմ Վենետկոյ Մխիթարեան միաբանից վանքին թանգարանին գլխաւոր զարդերէն մէկն է։ Ամենէն վերջը մեծապէս տուէ եղաւ կուէրչինոյ պղնձի վրայ ժանտաջրով փորագրութեան, և յաջողցուց ալ Ս. Անտոն Բատուացւոյն մէկ կիսարձան մը շինելով, և անտառախիտ երկրի վրայ նստած Ս. Յովհաննէս Մկրտիչ մը փորագրելով։

---

7 և 14 թիւերը։

Հիները կը համրէին 7 մոլորակ, 7 նախնական գոյն, 7 համ և 7 հոտ. դարձեալ 7 հրաշալիք աշխարհի, 7 իմաստունք Յունաց և 7 հանդէսք կրկէսական խաղուց. 7 զօրավարներ որոշուեցան Թեբէն առնելու համար։ Գրեթէ ամեն ազգ ժամանակը 7 օրուան պարագաներու վրայ բաժնած է. ոմանք յերկրաբանից աշխարհածնութեան 7 օրերը կը համարին հետզհետէ 7 արարչագործութիւնք։ Երաժշտութեան մէջ 7 խաղ կայ, և երկար ատեն 7 մետաղ միայն համրուած է։ կրօնից գալով 7 թիւը հեթանոսութեան ժամանակ գերագոյն բան մը կը սեպուէր. Յոյները շատ անգամ 7 անասուն կը զոհէին։ Աստուածաշնչին մէջ ստէպ կը հանդիպինք 7 թուոյն, ինչպէս 7 եկեղեցիները (Յայտնութեան գրոց մէջ), 7 աշտանակները, 7 աստեղեան ոսկի ճրագարանները, 7 կանթեղունք, 7 աստեղք, 7 կնիք, 7 հրեշտակք, 7 փողք, 7 հարուածք, 7 գլուխ վիշապներ 7 ական թագով պսակուած, և այլն, և այլն։ Ուղղափառ կրօնից մէջ կը գտնենք 7 սաղմոսք ապաշխարութեան, 7 ուրախութիւնք և 7 ցաւք Ս. կուսին, 7 շնորհք Հոգւոյն Սրբոյ, 7 սուրբ խորհուրդք, 7 մահացու մեղք, 7 մասունք ժամակարգութեան. ըստ ռամկական առածին արդարը օրուան մէջ 7 անգամ կը մեղանչէ։

Հենրիկոս Դ Գաղղիոյ թագաւորին պատմութեանը մէջ 14 թիւը մեծ մաս ունեցած է։ Այս թագաւորը դեկտեմբերի 14ին ծնած է, 14 դար, 14 տասնեակ և 14 տարի յետ Քրիստոսի. մեռած է մայիսի 14ին. իրեն անունը 14 գրէ բաղկացած էր (Henri de Bourbon). չորս անգամ 14 տարի ապրեցաւ, չորս անգամ 14 օր և 14 շաբաթ։ Գաղղիոյ և Նաւարրայի թագաւոր եղաւ երեք անգամ 14 տարի. վիրաւորուեցաւ Շադելէն դեկտեմբերի 14էն 14 օր ետքը, 1594ին. այս օրուան և իր մահուան օրուան մէջ 14 տարի կայ, 14 ամիս և հինգ անգամ 14 օր. Իվրիի պատերազմէն յաղթական ելաւ մարտի 14ին։ Տօֆէնը ծնած էր սեպտեմբերի 14էն 14 օր ետքը։ Մկրտուեցաւ օգոստոսի 14ին, և հուսկ ուրեմն սպաննուեցաւ մայիսի 14ին, մարդեղութենէն 14 դար և 14 ոլիմպիադ ետքը. սպանութիւնը թագուհւոյն Սէն-Տընի մնալէն երկու անգամ 14 ժամ ետքը եղաւ. Ռաւայեագ կրեց իր գլխապարտութեան պատիժը թագաւորին մահուընէն 14 օր ետքը, յամին 1610 որ բաժանական է 14 թուոյն վրայ։